# 594 Տրտմության մեջ իմ հոգու՝ հույսն է միակ,

1. Տրտմության մեջ իմ հոգու՝ հույսն է միակ,
Խավարի մեջ օրերիս՝ լույսն է միակ,
Նա է, որ Իր գիրկն առած, ինձ է օրհնում,
Ինձ չարից ամեն վայրկյան Նա է փրկում:

Հայրն է Նա իմ,
Հայրն է Նա քո,
Հայրն է ներող,
Տերն է սիրող:
Հավատա՛ և աղոթի՛ր, որ մեր կյանքը սեր դառնա,
Հավատա՛ և աղոթի՛ր, որ խավարը հեռանա,
Հավատա՛ և աղոթի՛ր, ցավ ու վիշտ կվերանան,
Հավատա՛ միայն և աղոթի՛ր,
Հավատա՛ միայն:

2. Ով Նրան ամբողջ սրտով կորոնի,
Ով Նրան ամբողջ հոգով կապավինի,
Միշտ Նրա կրծքին փարված՝ կյանքն իր կապրի,
Ողողված Նրա լույսով՝ միշտ կօրհնվի: